ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

CALIFORNIA CalVCB VICTIM COMPENSATION BOARD

Բռնության ենթարկված զոհերը կարող են ստանալ ընդհանուրը մինչև 70,000 դոլար փոխհատուցում՝ ուղղված նրանց ապաքինմանը: Այս ուղեցույցը ներկայացնում է՝
• Ով կարող է ստանալ աջակցություն • Որքան գումար կարող են ստանալ • Ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ CalVCB-ին •

Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՍՏԱՆԱԼ ՆՊԱՍՏՆԵՐ

V **ԱՆՄԻՋԱԿԱՆ ԶՈՐ** ով հանցագործության պատճառով ստանում է ֆիզիկական մնասվածք, մնասվածքի սպառնալիք, կամ մահանում է:

D **ԱՆՈՒՂԱԿԻ ԶՈՐ** ով ֆինանսական մնասներ է կրել անմիջական զոհի մնասվածքի կամ մահվան հետևանքով: Կարող է լինել ընտանիքի անդամ, սենյակակից, կամ խնամակալ:

P **ՎՃԱՐՈՂԸ** ով վճարում է կամ ստանձնում է հանցագործության հետ կապված ծախսերի պատասխանատվությունը:

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿ	Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ	ՆՊԱՍՏԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ
ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ/ԿԱՄ ԹԱՂՈՒՄ	P	**Մինչև $12,818**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Ապացույց, որ զոհը մահացել է իրական հանցագործության արդյունքում:
- Հուղարկավորության կամ թաղման ծախսերի անդորրագրեր: Ծառայությունն մատուցողները նույնպես կարող են անմիջապես հաշիվ ներկայացնել CalVCB-ին:

ԲԺՇԿԱԿԱՆ ԵՎ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ	V P	**Մինչև $70,000**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Հանցագործության մասին զեկույցի կամ բժշկական/ատամնաբուժական արձանագրությունների հիման վրա ապացույցներ, որ բժշկական/ատամնաբուժական ծառայությունների կարիք կա:
- Ապացույց, որ հանցագործության արդյունքում բժշկական սարքեր են վերցվել, կորել, մնասվել, ոչնչացվել կամ այժմ անհրաժեշտ են:
- Բժշկի կողմից տրված գրություն, եթե անհրաժեշտ են տնային ծառայություններ, որտեղ նշված է անհրաժեշտ խնամքի տևողությունը և որ ընտանիքի անդամի կամ այլ անձի կողմից խնամքը բժշկական տեսանկյունից անհրաժեշտ է:
- Ատամնաբուժական հաշիվները պետք է ներկայացվեն Ամերիկյան Ատամնաբուժական ասոցիացիայի պահանջի ձևի հիման վրա:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՈՒՄ	V D P	**Մինչև 60 սեանս և $10,000 ինչպես մանրամասն ներկայացված է ստորև՝**

V Սեանսի սահմանաչափեր՝
- 60 սեանս

D Սեանսի սահմանաչափեր՝
- 60 սեանս, եթե անմիջական զոհը մահացել է հանցագործության արդյունքում:
- 50 սեանս, եթե անուղղակի զոհը հանցագործության պահին անչափահաս է եղել:
- 50 սեանս, եթե անուղղակի զոհը հանցագործության ժամանակ անմիջական զոհի հիմնական խնամակալն է եղել: Այս ամենը ընդհանուր $10,000 սահմաններում՝ երկու խնամակալների համար միասին վերցված:
- 30 սեանս, եթե անուղղակի զոհը չի համապատասխանում վերոնշյալ չափանիշներին: Առավելագույնը $5,000 սահմաններում:
- 30 սեանս, եթե անուղղակի զոհը դարձել է անչափահաս զոհի խնամակալ հանցագործությունից հետո: Պետք է իրականացվի $5,000 սահմաններում՝ ի օգուտ անմիջական զոհի:

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Ստացված հոգեկան առողջության բուժման վերաբերյալ մանրամասն անդորրագրեր: Ծառայություններ մատուցողները նույնպես կարող են անմիջապես հաշիվ ներկայացնել CalVCB-ին:
- Ծառայություն մատուցողի կողմից լրացված Հոգեկան առողջության հաշվառման ձևաթուղթ՝ իրենց առաջին հաշիվի հետ միասին:
- Ապահովագրության վճարը հաստատող փաստաթուղթ, եթե առկա է:

ՈՂԵԿՑՈՂ, ԱԶԴԱՆՇԱՆՈՂ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՇՈՒՆ	V	**Մինչև $10,000**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Հանցագործության պատճառով մնասված կամ մահացած ուղեկցող, ազդանշանող կամ ծառայողական շան գնման կամ բուժման ծախսերի անդորրագրեր:

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՏԵՍԱԿ	Ո՞ՎՔԵՐ ԵՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ	ՆՊԱՍՏԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ
ԵԿԱՄՈՒՏԻ ԿՈՐՈՒՍՏ	V D	**Մինչև $70,000**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Հաշմանդամության մասին արձանագրություն բժշկական կամ հոգեկան առողջության ծառայություններ մատուցողից:
- Բժշկական ծառայություններ մատուցողի կողմից տրված ապացույց այն մասին, որ ծնողը կամ խնամակալը պետք է անչափահասի հետ մնան հիվանդանոցում:
- Եկամտի վկայագիր (հարկային հաշվետվություն, աշխատավարձի վճարման կտրոն կամ գործատուի կողմից տրված տեղեկանք):

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍՏ	D	**Մինչև $70,000**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Ապացույց, որ անձը հանցագործության ժամանակ օրինական կերպով կախված է եղել զոհից (ծննդյան կամ ամուսնության վկայական, որդեգրման արձանագրություններ, երեխայի աջակցության արձանագրություններ, կամ սոցիալական ապահովության փաստաթղթեր):
- Եկամտի վկայագիր (հարկային հաշվետվություն, աշխատավարձի վճարման կտրոն կամ գործատուի կողմից տրված տեղեկանք):

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՐ	V	**Տարեկան $10,000 առավելագույնը երկու տարի**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Մարդկանց անօրինական առևտրի անմիջական հետևանքով եկամտի կորստի վերաբերյալ ապացույց՝ հետևյալ փաստաթղթերից որևէ մեկի տրամադրմամբ՝
  - ◊ Իրավապահ մարմինների կողմից տրամադրված արձանագրություն, կամ
  - ◊ Դիմող անձի, մարդկանց անօրինական առևտրի գործերով զբաղվող աշխատակցի, լիցենզավորված փաստաբանի կամ վկայի կողմից սուտ վկայություն տալու համար նախատեսված պատժի ներքո տրված երդվյալ հայտարարություն:
- Մարդկանց անօրինական առևտրի փոխհատուցման լրացված ձև:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՄ ՆՄԱՆԱՏԻՊ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	V	**Մինչև $70,000**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Կալիֆորնիայի վերականգնողական բաժնի գնահատականը:

ՎԵՐԱԲՆԱԿԵՑՈՒՄ	V	**Մինչև $3,418**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Իրավապահ մարմինների կողմից տրամադրված ապացույց, որ զոհի անվտանգության ապահովման համար վերաբնակեցումը անհրաժեշտ է:
- Հոգեկան առողջության ծառայություններ մատուցողի կողմից ապացույց, որ վերաբնակեցումը անհրաժեշտ է զոհի հուզական բարեկեցության համար:
- Վերաբնակեցման ծախսերի՝ վարձակալության, կոմունալ վճարումների կամ տեղափոխման ծախսերի անդորրագրեր:
- Լրացված վարձակալությունը հաստատող ձևաթուղթ և վարձակալության պայմանագրի պատճեն:

ՏԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ	V D	**Մինչև $1,000**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Հանցագործության անմիջական հետևանք հանդիսացող ծախսերի ապացույց:
- Տան անվտանգության ծախսերի անդորրագրեր:

ՏԱՆ ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՍՆԱԿԻ ԿԱՄ ԼՐԻՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԶՈՀԵՐԻ ՀԱՄԱՐ	V	**Մինչև $70,000**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Բժշկի կողմից հաստատում, որ կատարված հանցագործության արդյունքում բժշկական նկատառումներով անհրաժեշտ են փոփոխություններ:
- Գրավոր հաշվետվություն տան կենսապայմանների փոփոխումներ իրականացնող մասնագետից:
- Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքի մանրամասն նկարագրություն, վճարման պլան և նրանց լիցենզիայի պատճեն:
- Տան կենսապայմանների փոփոխման ծախսերի անդորրագրեր:

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԳՆՈՒՄ	V	**Մինչև $30,000**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Բժշկի ապացույց, որ հանցագործության պատճառով փոխված կամ փոխված մեքենա գնելը բժշկական անհրաժեշտություն է:
- Հայտարարություն զոհի կողմից՝ պարզաբանելով, թե արդյոք հանրային տրանսպորտը հասանելի է:
- Հաշիվ կամ գնահատում, որը ցույց է տալիս մեքենայի փոփոխման կամ գնելու արժեքը:
- Շարժունակության մասնագետի զեկույց:
- Լրացված վարձակալությունը հաստատող ձևաթուղթ և վարձակալության պայմանագրի պատճեն:

ՀԱՆՑԱՎԱՅՐԻ ՄԱՔՐՈՒՄ	P	**Մինչև $1,709**

Օրինակներ, թե ինչ է մեզ անհրաժեշտ՝
- Ապացույց, որ հանցագործությունը տեղի է ունեցել բնակելի տարածքում կամ տրանսպորտային միջոցում:
- Թափոնների մաքրման ընկերության կողմից հաստատված տան կամ տրանսպորտային միջոցի մաքրման անդորրագրեր:

ԼԵԳԵՆԴ

V	D	P
ԱՆՄԻՋԱԿԱՆ ԶՈՀ	ԱՆՈՒՂՂԱԿԻ ԶՈՀ	ՎՃԱՐՈՂ